


ժամ կլլել և անրացատրելի հիւանդութիւնը քիչ ատենէն անհետացաւ, թէ և առած դեղահատերը պարզապէս հացի միջուկով շինուած էին:

Ձափէ աւելի քնանալը մարդուս չկամութիւն և մտքի թմրութիւն կը պատճառէ, և կը նպաստէ մի միայն արտաքայ կարգի գիրնալու:

Հ. Ն.



ՍՍԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

— *The journal of Race development* անգլիերէն ամիսական հանդէսին Ապրիլի թիւին մէջ կայ հետեւալ յօդուածը, Armenia, Her Culture and Aspirations. զայս գրողն է The New Armenia-ի խմբագիր Տիար Աբշահ Մահտեսեան, որ այժմ Նիւ-Էորքի ակադեմիոյ անդամ հռչակուած է: Այս յօդուածը առանձին տետրով ալ հրատարակուած է, ի կողմանէ Clark University. WORCESTER, Mass.

— ՎԵՐԱՄՈՒՆԻԵՒ. Փարիզու մէջ հաստատուել է նոր ամսաթերթ մը, որ կանոնաւորապէս ամէն ամսու 14ին լոյս պիտի տեսնէ. ստացած ենք առաջին թիւը Յուլիս 14ին լոյս տեսած, կը բովանդակէ հետաքրքրական յօդուածներ, ազգալուրեր, զանազան գեղեցիկ փոփոխութիւններ, որոնցմէ մին Ժան Էքարի Հայաստանը, Բազմալեզու արտասուլուած, կայն կայն: Յայտնութիւն և յարատեւութիւն... Տարեկան բաժնեգրին է ֆրանք 15 կանխիկ. դիմել L. Hampartzoumian 16 Bld. St. Denis, PARIS.

— *Armenien*՝ Զուիցերիոյ մէջ հրատարակուող Orient-Mission գերմանալեզու թերթն է, որ իր անունը փոխած է՝ 7 թիւէն սկսեալ, և ասոր պատճառը կը բացատրէ իր առաջին էջին մէջ. կը բովանդակէ կարեւոր և ընտիր յօդուածներ,

ներ, ազգային տեղեկութիւններ, նպատակը գովիլի է և օգտակար, ծանօթացնել հայ ազգը՝ զուիցերալ ժողովուրդին, խմբագրապետն է Մ. Փիրանեան. տարեկան բաժնեգրին է ֆր. 2,50, արտասահման համար ֆր. 3. Դիմել M. Piranian, THALWIL = ZÜRICH, Suisse.

— Պր. Ս. Մ. Գրիգորեան մեզ դրկած է Լոնտոնի Daily Sketch յունիս 13ի օրագրիւր, որու չորրորդ էջին մէջ կը գրուին տեղոյն Հայկական կարմիր-խաչի անդամներէն՝ վեց անգլիուհի կոմսուհիներու և տիկիններու լուսանկարները, Լոնտոնի «Հայաստանի օր»-ուան գեղեցիկ յիշատակներն մին է, ինչպէս նաև Times լրագրիւր, որուն չորրորդ էջին մէջ գրուած է «Հայաստանի օր» տիտղոսին տակ յօդուած մը մանրատառ, ուր ամփոփուած են Անգլիացի, Ֆրանսացի և զանազան հեղինակաւոր անձերու պատգամները Հայոց նկատմամբ:

— ՀԱՅԱՍՏԱՆ. Կովկասու մէջ հրատարակուիլ սկսող նոր արևմտահայ լեզուով լրագրին 27,28,30,31 թիւերն ստացանք, առանց ախորդանքն ստանալու: Ասոր երկար և շարունակ զետեղած ենք Յունիս-Յուլիս Բազմալեզու կողքին չորրորդ երեսին վրայ:

— ՄԵԼԻԵ Ս. Դաւիթ Բէկ մեզ դրկած է Le Journal des Nations (41, Rue du Montparnasse, Paris) լրագրիւր, որուն խմբագիրն ինքն իսկ է և ուր զետեղած է Հայոց նկատմամբ յօդուած մը, La question arménienne վերնագրով, Մանրատառ չորս սիւնակներ նուիրուած են մեր ազգային կարեւոր խնդրոյն համար. իր ամբողջութեան մէջ՝ յօդուածը կը պարզէ Հայաստանի կացութիւնը, եւրոպացուց երեք տեսակ կարծիքները աւոր նկատմամբ, իր համառօտ պատմութիւնը, կայն: Շատ ընտիր և տրամաբանալ գրութիւն մ'է, որուն ընթերցումը ոչ միայն ախորժով կը կատարուի, այլ և համոզիչ է: